

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐՁ

ԲԱՑՈՒՄ 1889 Ա.Մ.

ՆԻՄ 2.

25 ՕԴՈՍՈՍ 1889



Կ. ԳՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԳԵԱՆ

1889

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հ. ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

Հ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հ. ՀԱՅԱ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1889 ԱՄԻ

ՆԻՍ 2.

25 ՕԿՈՍՈՍ 1889

ԴՐԱՅՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՈՅ

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒԽ. Եֆ. ԹԻՐԵԱՔԵԱՆ	Ա. ԱՅԵՆԱՊԵՏ
ՔՐԻՍՏՈՍՈԽՈՒՐ	ԴԱԶԱՐՈՍԵԱՆ Բ.
ՄԿՐՑԻՉ	ՄԵԼԻՔԵԱՆ Ա. ԱՅԵՆԱԴՊԻՐ
ԱԿԵՑԻՇ	ԹՆԿՐԵԱՆ Բ.

ՆԱԽԱԴԱՀ. — Ամեն. Տ. Խորէն Սըբաղան Պատրիարք.

ԱՏԵՆԱՊԵՏ. — Յարութիւն Էֆէնտի Թիրեաքեան.

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. — Երագիր Ներքին Կանոնագրի Ազգային Ժողովոյ. (Շարունակութիւն վիճաբանութեան.)
- Բ. — Տեղեկագիր Քննիչ Յանձնաժողովոյ ի վերայ Ելմուցոյցի 1888-89 և 1889-90 ամաց.
- Գ. — Առաջարկութիւն Ս. Պատրիարք Հօր յաղագս երկամեայ շրջանի տեսողութեան կրօնական Ժողովոյ.

Ընդ նախագահութեամբ Ամեն. Սըբաղան Պատրիարք Հօր, Ատենապետ Էֆէնտի ատեանը կը բանայ ժամ՝ 8ին, ի ներկայութեան 38 Երեսփոխանաց որոց թիւն ի վերջոյ 42ի կը յանդի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒԽԻՆՔ

1

Յայտարարութիւն ի Դիւանէ յաղագս վաւերացման Քաղաքական Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ատենական գործութեանց անցնելէ յաւաջ, Տեարք, կը

փութամ ծանուցանել Զեղ թէ՝ նորընտիր Քաղաքական Ժողովը վաւերացուած է Կայսերական կառավարութենէ եւ միանգամայն երկու յաջորդական նիստեր ունեցած է. թէեւ այդ նիստերուն մէջ, մեծամասնութենէ զուրկ լինելով, չէ կրցած ո' եւ է խընդրով զրադիլ, բայց յուսալի է թէ յաջորդ նիստերն արդիւնաւոր լինին:

Եետ սոյն յայտարարութեան Ատենապետ էֆէնտի կանցնի ատենական գործողութեանց:

2

Վաւերացումն ներկայ շրջանի Դ.րդ եւ Ե.րդ
նիստերու Ատենազրութեանց

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ներկայ շրջանի Դ.րդ
եւ Ե.րդ նիստերու առաջիր ատենագրու-
թիւնը արդէն ժամանակին բաշխուած լինե-
լով Զեղ, զայն Զեր քուէին կենթարկեմ:

Զայս ասելով Ատենապետ էֆէնտի, ի դի-
տողութիւն կը հրաւիրէ զերեսփոխանս Դ.րդ
նստի ատենագրութեան վրայ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Նիստ Դ.րդ
երես 75, սիւնակ Բ. — Ըստած է՝ « Եւ ո-
« բովնետեւ Սահմանադրութիւնը ընտրեալ
« եւ պաշտօնի վրայ գտնուող Երեսփոխա-
« նաց կէսէն մէկ աւելիի ներկայութիւնը
« պայման կը դնէ եւ այլն » . սոյն պարբե-
րութեան մէջ Սահմանադրին բառը պէտք
է որ լինի Նախարարութիւն: Մի եւ նոյն
խօսքիս մէջ չեմ ըստած՝ « Եթէ ժողովական
« մը երրորդ բացակայութիւն ունենայ, չոր-
« րորդին կը դադրի, այլ ըստած եմ. « Եթէ
« ժողովական մը չորրորդ բացակայութիւն
« ունենայ, հինգերորդին կը դադրի: »

ԹԱԴԱՌԵԱՆ Ռ. ԷՅ. — (Փրաւոր)
Նիստ Դ. Երես 88, սիւնակ Ա. 13րդ. տող
վերէն համրելով. — « Իսկ վերաքննութեան
ոչ այնքան» պիտի ըլլայ և վերաքննութիւն» :

Ուրիշ դիտողութիւն տեղի չունենալով,
Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ եւ ժո-
ղովը Կ. ՎԱԼԵՐՅԱՆԻ Դ.րդ նստի ատենա-
գրութիւնն հանդերձ եղած դիտողու-
թեամբ:

Ապա Ատենապետ էֆէնտի ժողովոյ ըն-
դունելութեան կենթարկէ Ե.րդ նստի ա-
տենագրութիւնը:

ԹԱԴԱՌԵԱՆ Ռ. ԷՅ. — (Փրաւոր) Նիստ
Ե. Երես 109, սիւնակ Ա. — Երդ. տող վե-
րէն համրելով պիտի ըլլայ « գործին առա-
ւել փայլ, մզում եւ ընդարձակութիւն
տալ» եւ ոչ թէ « գործեն » :

Ատենապետ էֆէնտի նոյնպէս քուէի կը
դնէ Ե.րդ նստի ատենագրութիւնն որ ԿԸ ՎԱ-
ԼԵՐԱՆԱՑ հանդերձ եղած դիտողութեամբ:

3

Երջումն Օրակարգի

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ատենական ուրիշ
գործողութիւն չունիմք, Տեարք, հետեւա-
րար պիտի անցնիմք մեր Օրակարգին որ սա
խնդիրներն կը պարունակէ իւր մէջ.

Ա. Մրագիր Ներքին կանոնագրի Ազ-
գային ժողովոյ:

Բ. Ելմուացոյց 1888-89 եւ 1889-90
ամաց եւ

Գ. Առաջարկութիւն Ս. Պատրիարք
Հօր յաղագս երկամեայ շրջանի տեւողու-
թեան կրօնական ժողովոյ:

Արդարեւ պէտք է ժողովոյ ըստ օրինի
ձեռք առնուլ նախ իւր Ա. Օրակարգը. Այլ
սակայն նկատելով որ կանոնագրի խնդիրն
այսօր չէ՝ կարելի վերջացնել եւ հաւանակա-
նաբար մեր շատ մը նիստերն պիտի գրաւէ,
կառաջարկեմ որ, Եթէ Զեղ հաճելի կը
թուի, շրջեմք Օրակարգն նախապատուու-
թիւն տալով կրօնական ժողովոյ պաշտօնի
տեւողութեան մասին Ս. Պատրիարք Հօր ա-
ռաջարկութեան որ կրնայ անմիջապէս իւր
լուծումը ստանալ, մանաւանդ թէ՝ Ն. Մըր-
րազնութիւնն կը փափաքի որ ժողովս բա-
րեհամի ստիպողութիւն տալ սոյն խնդրոյն:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ներքին կա-
նոնագրի խնդիրն ըստ իս աւելի ստիպողա-
կան է, մանաւանդ թէ անով միայն պիտի

կրնամք տնօրինել մեզ ներկայացեալ այլ
խնդիրներն Բայց որովհետեւ նորա քննու-
թիւնն այսօր չէ կարելի վերջացնել, եւ ինչ
պէս ըսուեցաւ, հաւանորէն մէկ քանի նիս-
տեր պիտի գրաւեն, ուստի Ս. Պատրիարք
Հօր առաջարկութեան առաջնութիւն տալու
մասին ես եւս համամիտ գտնուելով հան-
դերձ, կառաջարկեմ յայսմհետէ իւրաքանչ-
իւր նստի մէկ մէկ ժամ նուիրել ներքին
կանոնագրի վիճաբանութեան, Այս կերպով
մէկ կողմանէ կանոնագրի քննութիւնն յա-
ռաջ կերթայ եւ միւս կողմանէ Օրակարգի
միւս խնդիրներն նկատողութեան կառնուին,
Այսօր կանոնագրի Ա. գլան սկսելով կը
ձեռնարկեմք վիճաբանութեան, կը խօսիմք,
համամտութիւն գոյացնել կ'աշխատինք եւ
եթէ չի գտնեմք օրինական մեծամասնու-
թիւն, վիճաբանութիւնն փակեալ յայտարա-
րելով քուէարկութիւնն կը թողումք մեծա-
մասնութեան ներկայութեամբ օժտեալ մեր-
ձաւորագոյն նստին:

ԻՒԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՅ. — Կը ձայնակցիմ
Վսեմ. Ստեփան փաշայի առաջարկութեան:

ՊՈԵՆԱԿԵԱՆ Ց. ԷՅ. — Մեծամասնու-
թիւն ունիմք, Ատենապետ էֆէնտի:

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Պատախաննելով)
Ներկայից թիւն է 33. Բայց այս պահուստ օ-
րէնք չէ որ պիտի ժողովակեմք որպէս զի օ-
րինական մեծամասնութեան ներկայութիւնն
անհրաժեշտ դատուի: Խնդիրն կը վերաբերի
պարզապէս Օրակարգի խնդրոց առաջնու-
թեան եւ այս պարագայիս մէջ մեծամաս-
նութիւն որոնելու պէտք չունիմք կարծեմ:

ԱՍԵՆԵՐ — Ո՛չ, պ'տք շիկայ:

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ, Տեարք, ինչ
պէս լսեցիք, Վոնմ. Ստեփան փաշա եւս հա-
մամիտ գտնուելով հանդերձ Օրակարգի
շրջման, կառաջարկէ իւրաքանչիւր նստի մէկ

մէկ ժամ նուիրեալ Ներքին կանոնագրի վի-
ճաբանութեան:

Ուստի կը հրաւիրեմ զժողովդ առ այս
իւր ձեռնարկարձ հաւանութիւնն յայտնել:

ԴՊԱՀԱՐԿՈՒԹԻՒՆ կատարուելով, ժողովը
22 քուէիւք, առանց հակառակ քուէի ԿՈՐՈՇԵ՝

Ա. Իւրաքանչիւր նստի մէկ ժամ նուիր-
ել ներքին կանոնագրի վիճաբանութեան:

Բ. Առաջնութիւն ընծայել Օրակարգի
Գ. րդ խնդրոյն:

Օ Բ Ա Կ Ա Ր Գ

Ա.

Մրագիր Ներքին կանոնագրի Ազգ. Ժողովոյ.
(Տարունակութիւն վիճաբանութեան)

ԱՏԵՆԱԿԵԱՆ ԷՅ. — կանցնիմք ուրեմն,
Տեարք, Օրակարգի Ա. Խնդրոյն, որ է՝ Մը-
րագիր Ներքին կանոնագրի Ազգային ժողո-
վոյ: Սոյն խնդրոյն վրայ վիճաբանութիւնն
միայն մէկ ժամ պիտի տեւէ, եւ եթէ որո-
շող ձայն չի կարենամք գտնել, իւրաքանչիւր
յօդուածի վրայ վիճաբանութիւնն փակեալ
յայտարարելով, որոշումը պէտք է ժողովակենք
այն նստին մէջ յորում ժողովս ներկայից
մեծամասնութիւն ունենայ:

Խնդրէս կը յիշէք, կանոնագրի Մըրագրին
ամրագութեան վրայ ասկէ առաջ, այն է՝
Յունիսի 23ի նստին մէջ վիճաբանութիւնն
փակեցինք, Վոնմ. Ստեփան փաշա եւս հա-
մամիտ գտնուելով հանդերձ Օրակարգի
շրջման, կառաջարկէ իւրաքանչիւր յօդուածի
ընթերցման, կառաջարկէ իւրաքանչիւր նստի մէկ

Զայս ասելով Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զԱտենադպիր էֆէնտի ընթեռնուլ Ներքին Կանոնագրին Ծրագրին Ա. յօդուածը :

Ատենադպիր էֆէնտի կը նթեռնուլ :

Յօդուած Ա.

« Գլուխ Ա. — Գումարմունք եւ մասնաւոր կանոնը նստին » Ազգային Ընդհանուր Ժողովն իւր Սահմանադրական պաշտօնը կառարելու համար (Տե՛ս Սահմանադրութեան Յօդուածը 60) երկու տեսակ դումարումներ կ'ունենայ , որոց մին Պարբերական եւ միւսն Պատահական :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս Ա. յօդուածի վրայ դիտողութիւն ունեցող նրեսփոխան- ները կը հրաւիրեմ խօսք առնուլ : Վասն զի յետ վիճաբանութեան փակման՝ այլ եւս նե- քելի չէ խօսք առնուլ եւ վերստին դիտութեանց մէջ մտնել :

ՊՈԽԱԿՈՒՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Կանոնագրին այդ Ա. յօդուածն պարզապէս Սահմանա- դրութեան մեկնութիւնն է , եւ որովհետեւ Սահմանադրութեան մի յօդուածն ներքին Կանոնագրին մէջ վետեղել եւ զայն մեկնելն պարզապէս Սահմանադրութեան վերաքննու- թեան դուռ բանալ կը նշանակէ , ուստի կառաջարկեմ Կանոնագրին մէջէն բոլորովին վերցնել այդ յօդուածը :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱԾԱ — Իրր Տեղեկա- բեր Ծրագրի Յանձնաժողովոյն՝ խօսք կու- զեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք ուղարկ Տեղեկաբեր Փաշային , կուզեմ երկու բառով պատասխանել Պուլկուրեան էֆէնտի դի- տողութեան :

Պուլկուրեան էֆէնտի կառարկէ թէ սոյն յօդուածն պարզապէս Սահմանադրութեան

մեկնութիւնն է որ իրնայ վերաքննութեան դուռ բանալ : Բայց ինչո՞ւ զարմանալ . միթէ ժողովս պաշտօն չի յանձնե՞ց իւր Յանձնա- ժողովին որպէս զի ներքին Կանոնագրին ճիշտ ու ճիշտ համաձայնեցնէ Սահմանադրութեան , եւ ասի միթէ վերաքննութեան դուռ բա- նալ կը նշանակէ :

Այս հակիրճ պատասխանէ վերջ կը հը- րաւիրեմ Տեղեկաբեր Փաշան խօսք առնուլ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱԾԱ — (Տեղեկաբեր) Պուլկուրեան էֆէնտի յարուցած խնդիրն թէեւ ըստ ինքեան զուրկ չէ կարեւորութե- նէ , բայց անտեղի է այս պարագայի մէջ . զի ներքին Կանոնագրիը փոփոխութիւն չ'է մտցուցած Սահմանադրութեան այն պարբե- րութեան մէջ զոր կը յիշատակէ , ուստի , ինչ- պէս իրաւամբ դիտել տուաւ մեր Ատենա- պետ էֆէնտին , բնաւ Սահմանադրութեան վերաքննութեան դուռն չ'բանար :

Սահմանադրութիւնն կը արամադրէ որ Ազգային Ժողովն երկու տեսակ գումարում- ներ ունենայ , մին՝ Սովորական եւ միւսն Արտարոյ կարդի : Սովորական նիստերն տե- ղի կունենան առանց Բ. Դրան հաճութեան , իսկ Արտարոյ կարգի նիստերն արտօնու- թեամբ Բ. Դրան :

Արդ Զեր Յանձնաժողովն Կանոնագրի Ա. Յօդուածին մէջ այս երկու բառերուն վրայ լոկ բառական բարեփոխութիւն մ'է ը- րած՝ Արտարոյ կարգի բառին տեղ դնելով Պատահական բառը եւ Սովորականին տեղ Պարբերականը

ՊԵՏԱԿԱՆ Յ. ԷՖ. — Ես կառաջար- կեմ վերցնել նաև Պատահական բառը եւ ըստ Սահմանադրութեան դարձեալ Արտա- րոյ կարգին գործածել :

ՊՈԽԱԿՈՒՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Էստ որում Կա- նոնագրի Ա. յօդուածն Սահմանադրութեան մէկ պարբերութեան կրկնութիւնն է ըսի , ուս- տի , կառաջարկեմ ջնջել զայն իրեւ աւելորդ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱԾԱ — Կանոնագրի Ա. յօդուածին վրայ երկու տեսակ դիտու- թիւնք տեղի կունենան :

Պօշնակեան էֆէնտի կառաջարկէ Պա- տահական բառին տեղ դնել դարձեալ Ար- տարոյ կարգի բառն որ կը համապատասխա- նէ Սահմանադրութեան : Իսկ Պուլկուրեան էֆէնտի կառաջարկէ սոյն յօդուածն , իրը մեկնութիւնն Սահմանադրութեան , ջնջել կա- նոնագրի մէջէն :

Պատասխաննելով նախ Պօշնակեան է- ֆէնտիի , կը սեմ . — Իրաւ է որ եթէ Պատա- հական բառին տեղ Արտարոյ կարգի բառը դնեմք , ճշդիւ հետեւած կը լլամք Սահմանա- դրութեան տառին , սակայն այդ փոփոխեալ բառն կոկիկ բառ մ'ը լլամք հանդերձ , կը նշանակէ թէ՝ եթէ պատահի գործ , պիտի գումարեմք Ժողով , մինչդեռ Արտարոյ կար- գի բառը աւելի Ընդհարձակ նշանակութեամբ կառնուի եւ կրնայ ենթադրել տալ թէ՝ մեր սովորական գործերէն զատ արտաքոյ կարգի նիստեր եւս կ'ընեմք :

Գալով Պուլկուրեան էֆէնտիի , ինքն այնպէս կուզէ հաւատալ թէ՝ Սահմանադրու- թեան տրամադրութիւն մը ինքնութեամբն ներքին կանոնագրին մէջ անցնել եւ զայն գործադրելու եղանակներն որոշելը աւելորդ կրկնութիւն մ'է : Սխալ ենթադրութիւն : Եթէ այս յօդուածն ջնջեմք մեր կանոնա- գրին մէջէն , չէ՞մի որ ամեն վայրկեան դարձ- եալ Սահմանադրութեան դիմելու պիտի պարտաւորիմք :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Փափաքէլի էր մեզ գիտնալ թէ՝ Ընդհանուր սկզբա՞նց վը- րայ պիտի խօսիմք թէ ոչ բառերու փոփո- խութեանց : Եթէ սկզբան վրայ պիտի խօ- սիմք , կը յիշեցնեմ թէ արդ լն վերջընթեր նստին մէջ կանոնագրին ամրազութեան վը- րայ վիճաբանութիւնն փակուեցաւ եւ ըստ օրինի կարելի չէ մեզ վերստին առ այն վե- րադառնալ : Իսկ եթէ լոկ բառերու փոփո-

խութեան վրայ է խնդիրն , շարժեր այսքան ծանրանալ , զի քուէն է որ պիտի որոշէ :

ՍՈՒԲԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Կուլկուրեան է- ֆէնտի դիտել տալով թէ կանոնագրին Ա. յօդուածը Սահմանադրութիւնն մեկնելու բնութիւն ունի որ կրնայ վերաքննութեան դուռ բանալ , կառաջարկէ վերցնել այդ յօդուածն կանոնագրի մէջէն : Այս արդէն պատրաստեալ սոյն ներքին կանոնագրի մէջէն :

ՊՈԽԱԿՈՒՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Սուբէնեան էֆէնտի թիւր կը մեկնէ իմ խօսքերս , բայց չեմ ուզեր երկրորդել զայնս Միայն սաշամք կը սեմ թէ՝ ներկայացնեալ կանոնագրին իւ- րաքանչիւր յօդուած հարկ է որ լուրջ վի- ճարանութենու անցնի եւ այնպէս ընդունուի , վասն զի կը տեսնեմ թէ ներկայ կանոնագրու- թեամբ կուզուի չէ զոքացնել Ժողովոյս պաշ- տօնը

ԶԱՅԱՆԵՐ — (Ընդմիջմամբ) Ո'չ , այդպէս բան չիկայ :

ՊՈԽԱԿՈՒՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակե- լով) Յիշեցէք Տեղարք , թէ այս կանոնագրի- րը յետ ընդունելութեան Ժողովոյս , Բ. Դրան վաւերացման պիտի ենթարկի եւ յետ վաւերացման զղումը անօգուտ է , կը խընդ- րեմ Դիւանէն լաւ արձանագրել տալ իմ այս խօսքերս :

Ուրիշ դիտողութիւն տեղի չունենալով , Ատենապետ էֆէնտի կանոնագրի Ա. Յօդ-

ուածին վրայ վիճարանութիւնը փակեալ կը յայտարարէ :

Հետեւարար Ատենադպիր էֆ. կանցնի Կանոնագրի Շրագրին թ. յօդուածոյն ընթերցման :

Յօդուած թ.

«Պարբերականը տեղի կունենայ երկու տարին մի անգամ, եւ երկամսեայ նստաշընքան մը կը կազմէ Մայիս եւ Յունիս ամսոց մէջ՝ բաղկացեալ այնքան նիստերէ որքան հարկաւոր լինին իւր Սահմանադրական Օրակարգն սպառելու (Սահմանադրութիւն Յօդ. 61) :

Սոյն Օրակարգ կը պարունակէ հետեւեալ խնդիրներն .

Ա. Համարատուութիւն երկամսեայ պաշտօնավարութեան Ազգային Վարչութեան .

Բ. Հաշուեքննութիւն Ելից եւ Մտից նոյն երկտարեկան շրջանի .

Գ. Ընտրութիւն նոր կրօնական եւ Քաղաքական ժողովոց . եւ

Դ. Կարգադրութիւն Ելեւմտից հետագայ երկտարեկան շրջանի :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Կանոնագրի սոյն թ. յօդուածին վրայ դիտողութիւն ունեցող կայ :

ՍՈՒՐԵՆՍԱՆ Ա. Էֆ. — Ժողովն պահ մ'առաջ որոշեց իւրաքանչիւր նստի մէկ ժամ զոհել Ներքին Կանոնագրի յօդուածոց քըննութեան . բայց կը կարծեմ թէ այդ աշխատատութեամբ արդիւնք մը ձեռք չի պիտի կրնամք բերել, քանի որ որոշակի շեմք գիտեր թէ ի՞նչ թիւ պէտք է մեծամասնութիւն ունենալու համար :

Ուրեմն կառաջարկեմ որ ժողովս՝ փոխանակ Կանոնագրի թ. րդ յօդուածոյն՝ ա-

ռաջնութիւն ընծայէ այն յօդուածոյն որ կը վերաբերի ներկայութեան խնդրոյն : Լուծելով զայն, ժողովն այնուկետեւ կարող է ստոյդ եւ ապահով եւ ապահով եւ ապահով ամեն խընդրոյ վրայ վիճարանութիւններ ընել եւ որոշումներ տալ առանց ժամանակամատ լինելու :

ԱԱՅՆԵՐ — Բայց այդ յօդուածն ալ վաւերացնելու համար չունիմք մեծամասնութիւն :

ՍՈՒՐԵՆՍԱՆ Ա. Էֆ. — (Պատասխանէլով) Բայց այսօր խնդրոյն վրայ լուսարանուինք, կարծիքներն հաշտեցնենք եւ առաջին նստին յօրում մեծամասնութիւն ունենամք, անմիջապէս որոշումն քուէարկենք :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — 1860էն ի վեր չէ եղած խնդիր մը որ այնքան ծեծուածըլլայ որքան մեծամասնութեան խնդիրը, բայց եւ այնպէս մինչեւ ցարդ չեմք կրցած համաձայնութեան մը յանդիլ այնպիսի գործնական միջոցի մը որ ներէ մեզ հաշտունուիլ Սահմանադրութեան բացորոշ արքամադրութեան հետ :

Ասկից զատ պէտք է գիտնալ թէ Մը բարգրին յօդուածներն սերտիւ կապուած են իրարու հետ եւ թէ՝ ամրողջութիւնն եւ թէ մէն մի յօդուած լաւ ըմբռնելու համար պէտք է հետեւիլ այն շարքին զոր գծած է Զեր Յանձնաժողովն . Ուստի անօդուած կը դատեմ Սուրբէնան էֆէնտիի առաջարկած յօդուածական յեղաշրջումն :

ԱԱՅՆԵՐ — Շատ լաւ :

ՍՈՒՐԵՆՍԱՆ Ա. Էֆ. — Կըսէի թէ՝ ըստ որում մեզ համար կանոնագրի մը պիտի քուէարկեմք, աւելի օգտակար է նախ այդ կանոնագրին ներկայութեան յօդուածն նըկատողութեան առնուլ . միւս յօդուածներն այժմ իսկ գործադրութեան մէջ են, զի նիստի բացում, քուէարկութիւն, խօսից և շփոթէք :

ՆԻՍՏ Զ. — 25 ՕԴՈՒՍՈՒ 1889

143

ցարդ նկատողութեան առնելու զայն :

Այսօր կարգն եկած է այդ խնդրով ըզբաղելու եւ ըստ օրինի նախ ամրողջութեանը վրայ ընդհանուր վիճարանութիւն տեղի պիտի ունենայ, ապա պիտի անցնիմք յօդուածոց վիճարանութեան :

Որոնք որ ըսելիք ունին խնդրոյն վրայ, թող հաճին խօսք առնուլ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — Ներկայացեալ Ելմտացոյցը երկու մասի կը բաժնուի . Ա. մասը որ կը վերաբերի 1888-89 տարւոյն, արդէն լրացած է, եւ ելնել լրացեալ բանի մը վրայ՝ իրոււ ենթադրեալ պիտմէ՝ վիճարաննելն ըստ իս բանաւոր չէ : Ուստի ես կառաջարկեմ Ելմտացոյցի Ա. մասը յանձնել մեր մի եւ նոյն Յանձնաժողովոյն եւ պաշտօն տալ նմա երթալ ճշտել թէ սոյն տարուան մէջ եղած ծախքերն ու մուտքերը ճշտիւ կը համապատասխաննեն ներկայացեալ Ելմտացոյցին թէ ոչ : Իսկ երկրորդ մասը, որ կը վերաբերի ներկայ շրջանիս, ըստ օրինի յանձնել նորընտիր Քաղաքական ժողովոյ եւ անոր կարծիքն ալ առնըլէ յետոյ ենթարկել վիճարանութեան :

ՓԱՓԱԶԵԱՆ Պ. Էֆ. — (Իբր անդամ Ելմտացոյցի Յանձնաժողովոյ) Շատ զարմանալի է տեսնել որ ժողովս ասկէ 3—4 ամիսներ առաջ իւր Վարչութեան համարատուութիւնըն կը քննէ եւ կը վերջացնէ, իսկ հաշուատուութիւնն որ նոյն համարատուութեան մասը կը կազմէ

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — (Ընդմիջմամբ) Կը յիշեցնեմ Ատենարան էֆէնտիին թէ ասկէ առաջ ներկայացեալ համարատուութիւնն նուրեան էֆէնտիի Վարչութեան համարատուութիւնն էր, իսկ Ելմտացոյցն կը վերաբերի Սիմօն պէտի Վարչութեան : Կը խընդրեմ որ թուտկաններն իրարու հետ և շփոթէք :

ՓԱՓԱԶԵԱՆ Պ. Էֆ. — (Շարունակելով)

Ինչ որ է, բայց քանի որ սոյն հաշուած քըննութիւնն մեզ յանձնեցիք եւ մեք խղճի մըտաք եւ մանրակրկիտ քննութենէ մը զկնի մեր տեղեկագիրն բերինք, չեմ հասկնար թէ ի՞նչ կը նշանակէ այժմ ելնել առարկելն թէ՝ կարեւորութենէ զուրկ է այն ըստ որում ժամանակական անցած է

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — (Պատասխանէլով) Խնդրեմ, սխալ մի՛ ըմբռնէք մեր առաջարկութիւնը : Կարեւորութիւն տալու կամ չի տալու խնդրի շիկայ հոս . Ընդհակառակն գոհ եմք Զեր աշխատութենէն

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Կը հրաւիրեմ Վասմ. Ստեփան Փաշան վերատին կրկնել իւր առաջարկութիւնը որպէս զի լաւ հասկցուի :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — Ես կառաջարկէ թէ՝ քանի որ 1888-89ի տարեշրջանը լըրացած է, այլ եւս անօդուած է պիտմէ սահմաննել այդ շրջանի համար, այլ ինչ որ կարեւոր է, այն է երթալ քննել թէ սոյն շրջանի մէջ տեղի ունեցած ելքն ու մուտքը ճշտիւ կը համապատասխանէն ներկայացեալ Ելմտացոյցին : Գալով 1889-90 տարւոյն, քանի որ Քաղաքական ժողովը փողով փոխուած է այժմ, պատշաճ է եւ վայելու անոր յղել այդ վերջին տարւոյ Ելմտացոյցն, անոր կարծիքն ստանալ եւ ապա պիտմէն վիճարանութեան ենթարկել, ո՛չ թէ 7 ամսոց համար, ինչպէս պիտի ըլլայ եթէ Յանձնաժողի տեղեկագիրն քննութեան առնումք, այլ երկու տարուան համար, ինչպէս պիտի ըլլայ եթէ Յանձնաժողի տեղեկագիրն քննութեան առնումք, այլ երկու տարուան համար, ինչպէս Սահմանադրութիւնը կը պահանջէ :

ԱԱՅՆԵՐ — Շատ լաւ, շատ լաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Խօսքը Ելմտացոյցի Յանձնաժողի անդամներին նազարեան էֆէնտիին է :

ՆԱԶԱՐԵԱՆ Տ. ԷՅ. — (Անդամ Ելմըտացոյցի Յանձնաժողովով) Արդարեւ ցաւալի է տեսնել որ նախորդ Քաղաքական Ժողովն Ելմտացոյցն դործադրութեան դնելէ յետոյ միայն ներկայացուցած է զայն Ազգային բարձրադոյն Ժողովոյն վաւերացման պաշտօնէից ամսականաց վրայ շուրջ տարեկան 300 ոսկւոյ վերադիրներ ըրած է դարձեալ այս գերագոյն Ժողովոյս հաւանութիւնը եւ որոշումը չստացած միթէ այս իրողութիւններն ինքնին զեղծում չեն ենթադրեր, եւ ինչ ապահովութիւն ունինք թէ արդի նորընտիր Քաղաքական Ժողովն ալ, որուն յդել կառաջարկուի 1889-90 տարւոյ Ելմտացոյցն, իւր նախորդին կողմանէ եղած կարգադրութիւնը չը պիտի նուիրագործէ ։ Պէտք է որ Ազգային Ժողովս այնքան մեծ կարեւորութիւն ընծայէ Պիւտամէի խնդրոյն որքան կընծայէ ուրիշ ազգային կենսական խնդրոց ։ Իրեն անկ է Յանձնաժողովոյ մը միջոցաւ յաջորդ տարուան Ելմտացոյցն պատրաստել, բարեփոխմամբ, յաւելմամբ եւ զեղչմամբ եւ յանձնել նորընտիր Քաղաքական Ժողովոյ ի գործադրութիւն։

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՅ. — Ազգային Ժողովս ասկէ առաջ Վարչութեան Ելմտացոյցի քննութեանն համար իւր մէջէն Յանձնաժողով մը կարգեց ։ Արդ երբ այսօր Յանձնաժողովն իւր քննութեանց արդիւնքն կը ներկայացնէ մեզ հանդերձ տեղեկագրով մը, մեծ անիրաւութիւն է զայնս նկատողութեան առնել շուգելն։

Ելմտացոյց մը կարելի է երկու մասի բաժնել ։ Ա. — Այն ծախքերն որք անխափան տեղի ունեցած են, կ'ունենան եւ պիտի ունենան եւ որոց մասին Ժողովով նոր որոշում տալու հարկին մէջ չէ գտնուած ու չպիտի գտնուի ։ Բ. — Էնդհանուր սկզբունքներն որք կորոշուին Ելմտացոյցի մը քննութեան առթիւ ։ Այսպէս Ժողովս Ելմտացոյցին առթիւ է որ կորոշէ թէ՝ այս ինչ քանին պէտք ունի կամ այն ինչ բանին

պէտք չունի ։ Թերեւս հարկ ըլլայ Պատրիարքարանի մէջ իրաւագէտ Խորհրդականի մը ներկայութիւնը, ո՞վ պիտի որոշէ ։ անշուշո Ժողովը ։ Հետեւաբար Ժողովոյս համար երկրորդական խնդիր է գիտնալ թէ՝ քանին ամիս ունի իւր առջեւը նոր Ելմտացոյցին համար ։ ինքն իւր որոշումները կուտայ եւ ներկային ու ապագային համար է այս ։

Ես ալ կը ցաւիմ որ նախորդ Քաղաքական Ժողովը իւր պաշտօնավարութեան վերջին ալահուն ամսականաց վրայ նորանոր յաւելումներ ըրած եւ նոր ծախքերու դռներ բացած է առանց Ազգային Ժողովոյս հաւանութեան բայց անշուշո եմ որ Ժողովս Ելմտացոյցի վաւերացման պահուն ո՛չ թէ համոյք ընելու հարկին մէջ պիտի գըտնուի, այլ արդարութիւն եւ օգտակարութիւնը միայն իրին կէտ նպատակի պիտի ընէ ։

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Կառաջարկուի, Տեարք, Ելմտացոյցն նորընտիր Քաղաքական Ժողովոյն վերադարձնել եւ անոր կարծիքն ալ ստանալ ։ Այս առաջարկութիւնն ասկէ առաջ Ժողովոյս կողմանէ տրուած որոշման բոլորովին հակուտնեայն է ։ Վասն զի արդի Քաղաքական Ժողովոյ ընտրութենէն քիչ առաջ էր որ Ժողովս պաշտօն յանձնեց իւր Յանձնաժողովին ըստ օրինի քննութեան ենթարկել Ելմտացոյցն եւ արդիւնքն տեղեկագրել իրեն ։ եթէ կուզէիք նորընտիր Քաղաքական Ժողովոյ կարծիքն ալ ստանալ, ի՞նչ հարկ կար Յանձնաժողով կազմելու, յանձնարարութիւններ ընելու ։ կրնայիք քիչ մը եւս սպասել մինչ յ'ընտրութիւն նորընտիր Քաղաքական Ժողովոյ ։ Այս Ընթացքն, ինչպէս ըստ, հակասական է ։

Այսօր մեր Յանձնաժողովն ըստ կարեծ է իւր քննութեանց տեղեկագրին եւ ընդ նմին ուրոյն Ելմտացոյց մ'ալ եւ այս շատ՝ իրաւամբ, վասն զի Պիւտամէ շինելու իրաւունքն սկզբամբ Ազգային Ժողովոյս կը վերաբերի ։ Հետեւաբար մեք սկզբաւոր եմք ներկան

յացեալ այդ Ելմտացոյցն զլուխ առ դլուխ միճարանութեան ենթարկել, մանաւանդ թէ վախաքելի էր որ նորընտիր Քաղաքական Ժողովոյ անդամք եւս ներկայ լինէին աստ խնդրոյն վրայ լուսաբանուելու համար ։

Այդ կէտերուն գլխաւորն է չովուրիկան ծուխուց զլուխ առ դլուխ միճարանութեան ենթարկելի էր որ նորընտիր Քաղաքական Ժողովոյ անդամք եւս ներկայ լինէին աստ խնդրոյն վրայ լուսաբանուելու համար ։

Այս առթիւ աւելըրդ չեմ համարիր դիտել տալ նաև թէ՝ պիւտամէի խնդրոյն մէջ ժամանակագրական սխալ մը մուտ գըտած է ։

ԱԱՅՆԵՐ — ԻՆՉՊէ՞» :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Պիւտամէի պատրաստութիւնն ըստ օրինի տեղի կաւանայ Վարչութեանց ընտրութեան պահուն, որպէս զի նորընտիր Վարչութիւնն ի ձեռին ունենալով իւր երկտարեկան պաշտօնավարութեան պիւտամէն, կէտ առ կէտ անոր հետեւի խսկ հրաժարման պահուն կը ներկայացնէ մեզ իւր գանձած եւ ծախսած գումարներուն հաշիւր, բայց մեք կը տեսնեմք թէ ասոր բոլորովին հակառակն տեղի կունենայ ։ Վարչութիւն մը պիւտամէ կը բերէ մեզ ճիշդ իւր հրաժարման վերջին ժամուն որոյ օրինակն այս անդամ ալ տեսանք դըժքաղաքար ։ Պէտք է, Տեարք, այս անտեղութիւնը մի անգամ ընդ միշտ բառնալ տեղի չի տալու համար չփոթութեանց ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խնդրոյն վրայ լսուցէք, Սուրէնեան էֆէնտի ։

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Արդ անցնելով բուն խնդրոյն, կը տեսնեմք թէ մեզ մեր Յանձնաժողովի ընդմիջմանց ։ (Առ Պէրպէհան էֆէնտի) Եւ դուք Պէրպէհան էֆէնտի, մի ընդմիջէք Ատենապետ ։

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ո. ԷՅ. — (Վերստին ընդմիջելով) Բայց ի՞նչ կը նշանակէ տարբեր խնդրոց վրայ ճառելն ։ Վիճարանելի խնդրոց Ելմտացոյցն է ։

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Տարունակելով) Այդ կէտերուն գլխաւորն է չովուրիկան ծուխուց զլուխ առ դլուխ միճարանութեան ենթարկել կուտայ թէ՝ պէտք եղած ուշադրութիւնն չէ ընծայուած ցարդ այդ ամենակենսական խնդրոյն գոհացում տալու համար ։ Իրաւ է թէ՝ կըսէ՝ Ազգային Ժողովը գումար մը յատկացուցած է Ելմտացոյցին մէջ այդ նըպատակին, որոյ հնդապատիկն իսկ եթէ ծախսուի, դարձեալ քիչ է, այսու հանդերձ նոյն գումարն իրր անուանական գումար մը մնացած է առանց իւր նպատակին գործածուելու ։ այսպէս եղած է սկիզբէն ի վեր ։

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Պատրասխանելով) Պէտքէրեան էֆէնտի այնպէս կը կարծէ թէ Պիւտամէի վիճարանութեան առթիւ ներելի չէ՝ ընդհանուր քննադատութեանց մէջ մտնել ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը հրաւիրեմ Սուրէնեան էֆէնտին ուղղակի խնդրոյն վրայ խօսիլ առանց պատասխանելու Պէրպէհան էֆէնտիի ընդմիջմանց ։ (Առ Պէրպէհան էֆէնտի) Եւ դուք Պէրպէհան էֆէնտի, մի ընդմիջէք Ատենապետ ։

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Տարունակելով) Հովուական այցելութեանց խնդրին մեզ համար ամենէն աւելի կարեւորութիւն ունեցող խնդրին կը նկատեմ, զի հայարնակ գաւառաց մէջ, որոց նկարագիրն կարելի չ վեր հանած է ։

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ո. ԷՅ. — (Վերստին ընդմիջելով) Բայց ի՞նչ կը նշանակէ տարբեր խնդրոց վրայ ճառելն ։ Վիճարանելի խնդրոց Ելմտացոյցն է ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Կ ճայն զանգակի)
Եթէ Պէրպէրեան էֆէնտի խւր սոյն ընդմի-
ջումներն արձանագրեալ չի տեսնէ Ատենա-
գրութեան մէջ, թող չի զարմանայ : (Խօսքն
Դիւանադպրաց ուղղելով) Մի՛ արձանագրէք
Պէրպէրեան էֆէնտիի խօսքերն :

(Եփոք ճայներ յամենուստ)

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Եարունակելով)
Այդ անխնամ գաւառներն ուսեալ եւ բա-
նիրուն հովիւներու պէտք ունին : Գաւա-
ռաց մէջ տեղի ունեցած կրօնավոխութիւնք,

որք օր աւուր բազմանալու վրայ են, ար-
դիւնք են կեդրոնին անհոգութեան եւ այն
մարմինն որ անփոյթ կը մնայ, ըստ իս դա-
տապարտելի է.....

Պէրպէրեան Ռէթէոս էֆէնտի վերստին
կընդմիջէ զետենաբանն : — Այս պահուս Ս.
Նախագահն կը մեկնի Ժողովասրահէն եւ Ա-
տենապետ էֆէնտի կը փակէ ատեանը
ժամ 9 1/2 ին :

Ատենադիր
Մ. Յ. ՄէԼԻՔԵԱՆ
Ատենապետ
Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

ՆԻՍ 2.

25 ՕԳՈՍՏՈՒ 1889

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Ե Ս Փ Ո Խ Ա Ն Վ Ք

Ա Յ Ա Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ե Ր Ե Ս Փ Ո Խ Ա Ն Վ Ք	Ա Յ Ա Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ե Ր Ե Ս Փ Ո Խ Ա Ն Վ Ք	Ա Յ Ա Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ե Ր Ե Ս Փ Ո Խ Ա Ն Վ Ք
ԵԿԵՂԵՑՎԱՐ	Ա. Վ. ՎԻՆԱԼ	Ա. Վ. ՎԻՆԱԼ
1 Մկրտիչ Արքա. Խրիմեանի	Գում-Գարու, կէտիկ փաշտ եւ Գում-Գարուի դուրս	47 Թագւոր Համամեան Բ Յ
2 Սիմէօն Եպո. Սէֆէրե.	21 Յակոր Գուրգէն	48 Բարսեղ Աւետիսեան Բ Զ
3 Գէորգ Վ. Խւթիւնեան	22 Մինս Զերազ	իւսկիւտար Ս. Կարսպետ
4 Խաչատուր Ք. Գարրիէլե. Բ Կ	23 Խաչիկ Կամսարական Բ 5	49 Պողոս Թորգոմեան Բ 6
Ա. Վ. ՎԻՆԱԼ	24 Միհրան Վարդաղարե. Բ Պ	50 Տրդատ Փափաղեան Բ 5
5 Խորէն Արքեալ. Նարակէ. Յ Բ	25 Մկրտիչ կիւրմեան Բ Պ	51 Յակոր Համեան Բ
6 Հմայեակ Դ. Դիմաքսե. Բ Պ	26 Երամ Ճենազեան Բ	52 Միհրան Մէթեան Բ 6
7 Յովսէփ Վ. Սարամեանի Պ	27 Սարգիս Աղաբէգեան Բ 4	Գ. Վ. ՎԻՆԱԼ
8 Արիստակէսի. Մամրէկ. Բ Բ	28 Գրիգոր Ալեանաքեան	Գապի Պապօւեան Բերս
Գ. Վ. ՎԻՆԱԼ	29 Աւետիս Սուրէնեան	54 Գրիգոր Սէլիմիյէն. Բ 2
9 Գարեգին Ե. Արուանձտթշ	30 Խաչիկ Մանեանեան Բ 5	55 Ղազար Հովուեան Բ 4
10 Յակոր Վ. Փափաղեան	31 Յարութիւն Մօստիչե.	56 Յարութիւն Պէկեան Բ
11 Յովհ. Քհ. Շահպաղե. Բ 2	32 Պողոս Պառնասեան Բ	57 Նշան Պօյամեան Բ
12 Սահակ Սարգսեան Բ	33 Տիրան Նազարեան	58 Վիշէն Օրմանեան Բ Պ
Դ. Վ. ՎԻՆԱԼ	34 Ստեփան Ասլանեան	59 Մինեքերիմ Մանուկե.
13 Եղիշէ Վ. Այվազեան Բ Պ	35	60 Համբարձմ. Մագպուլ. Բ Զ
14 Յովհ. Վ. Արշարունի Բ 3	36	61
15 Վահան Ք. Գրիգորե.	37	62
16 Կարապետ Ս Մէթեան	Բ. Վ. ՎԻՆԱԼ	Միջազիւդ
Ե. Վ. ՎԻՆԱԼ	Պէտիկըտա	63 Տիգրան Եռևասութեան Բ 4
17 Յովսէփ Վ. Այվազեան	38 Մկրտիչ Գազաննեան Բ Յ	64 Մկրտիչ Գազաննեան Բ Յ
18 Գարեգին Վ. Թալթարե. Բ Յ	39 Վահրամ Տատեան Բ 5	65 Ստեփան Տամատե. Բ 2
19 Սուքիասի. Մտեփանե. Բ Յ	40	66 Յար. Ն որատունկեան Բ 5
20 Գարրիէլ. Խանճեան	Եւելի-Գարու	67 Գէորգ Շնորհեան
Բ Բացակայութիւն առաջին	41 Մարուգէ Ֆրէնկեան Բ	Պէտիկօզ եւ Ղալարիս
2 ,	42 Պողոս Էնքսէրմեան	68 Միքայէլ Մամիկոն. Բ Յ
Գ , Բանաւոր պատճառաւ	43 Յակոր Պօնակեան	Գ. Վ. ՎԻՆԱԼ
	44	Քուզկումնուր եւ Խնախիչ
	իւսկիւտար Ս. Խաչ	69 Մկրտիչ Մէզպուրեան Բ
	45 Գանպար Գանպարե. Բ Յ	70 Միմօն Մաքսուտեան Բ Յ
	46 Մարտիրոս Գոլուեան	

Գարզիւղ	ԳԱՀԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ
71 Կարապետ Հազարեան թ 6	Ա. Վլամակ
72 Մկրտիչ Մանուկեան թ Նարլի-Գաբու	Զմշկածագ
73 Միհրան Տէօքմէնեան թ Ելեի-Մանալի Սամարխոյ	101 Գաղատիա
74	Ատանա
Թօր-Գաբու	102 Աղաման
75 Յարութիւն Թիրեաքե. Էյուայ Ս. Եղիա և Ս. Աստուածածին	103 Աղերդ
76	104 Մատթէոս Ալէքսանե.թ 2 Նօղդան
Գուրաւ-Զէմմէ	105 Մալարիա
77 Կարապետ Սըվաճեան թ Հիսար և Պօյանի-Գիւղ	106 Գէորգ Վարդանեան Իզմիր
78 Արամ Մարկոսեան թ 4 Նոր-Գիւղ և Սրէնիա	107 Եղիպառոս
79 Սեպուհ Տէմիրճիպաշեանթ Պալատ	108 Արրահամ Մուրասեան թ Բ. Վլամակ Պրուսա
80 Մկրտիչ Կիւմիւշեան	109 Բրիստոստուր Ղազար. թ Եւդոկիա
81 Ռէթէոս Թաղէոսեան թ	110 Տիգրան Ճգնաւորեն թ 6 Եղեսիա
82 Ներսէս Երէցեան թ 3 Քարակիւօմիւկ	111 Յակոր Իւթիւճեան Մաներիլս
83 Յովհաննէս Թորոսեան թ	112 Հանրն
84 Կարապետ Փանոսեան Ե. Վլամակ	113 Լեւոն Փափազեան թ 4 Երզնկա
Սամարիա	114 Ամաօիս
85 Յակոր Արշակ թ	115 Համբարձ. Ալաճաճեան Բալու
86 Յովհաննէս Նուրեան թ 2	116 Գ. Վլամակ Կարին
87 Գարրիէլ Նորատունկ. թ	117 Սերովիչ Ազնաւորեան Քէօրանեա
88 Գառնիկ Արշաւիր թ 9	118 Աւետիս Թընկրեան
89 Յակոր Ռսկան	119 Յակոր Պարտեան թ 6
90 Պարզեւ Փափազեան	120 Վարապետ Ա. Իւթիւճ.
91 Յովհաննէս Կրճիկեան թ 3	Ակե
92 Դրիգոր Ալչըճեան	121 Յովհաննէս Պօյաճեան թ 5
93 Եղիա Տէմիրճիպաշե.	122 Կարապետ Երէցեան թ 4
94	Արաման
Խասզիւղ	123 Կարապետ Միրիճանե.
95 Ռուբէն Պուլկուրեան	Բաղէշ
96 Նշան Փափազեան թ 4	124 Արփիւր Արփիւրեան Թէլիրտաղ
97 Ռէթէոս Պէրպէրեան	125 Տիգրան Գ. Սինանեան Կիսարիա
98 Բարսեղ Հալաճեան թ 6	126 Յովհաննէս Պալըքճեան Խարբերդ
99 Յովհակիմ Յովհակիմեան	127 Պալրժէուկը
100 Արիկ Ռւնճեան թ 6	128 Ստեփան Գօլուեան թ Մուշ

Նիկոմիդիա	129 Տիվրիկ
120 Կարապետ Ա. Իւթիւճ.	130 Նշան Գարագաշեան Զէյրուն և Մարաշ
Ակե	131 Տրապիզոն
121 Յովհաննէս Պօյաճեան թ 5	132 Ե. Վլամակ Պաղտասա
122 Կարապետ Երէցեան թ 4	133 Կարապետ Մէթեան թ 6 Տիգրանակերտ
Արաման	134 Միհրան Չօպանեան թ 2 Վան
123 Կարապետ Միրիճանե.	135 Մարկոս Աղարէգեանց.թ Աղրամար
Բաղէշ	136 Հալէպ և Այնրապ
124 Արփիւր Արփիւրեան Թէլիրտաղ	137 Սերաստիա
125 Տիգրան Գ. Սինանեան Կիսարիա	138 Մկրտիչ Յ. Մէլիքեան Ռուսնուզ
126 Յովհաննէս Պալըքճեան Խարբերդ	139 Բարերդ
127 Պալրժէուկը	140 Բարերդ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն Արք-Եպիսկոպոս Նար-Պէ. յ
2. Հ. Սիմէոն Արք-Եպիսկոպոս Սէֆէրեան
3. Դ. Դարեգին Արք-Եպիսկոպոս Սրուանձտեանց
4. Յ. Յովհէփ Վարդ. Այվազեան
5. Յ. Յովհաննէս Արշարունի
6. Յ. Յակոբ Փափազեան
7. Յ. Վահան Յակոբ Յակոբ
8. Յ. Տաճատ Արքա Յակոբ
9. Յ. Վահան Յակոբ Յակոբ
10. Յ. Սահակ Բահակ Յակոբ
11. Յ. Յովհաննէս Մկրտիչ
12. Յ. Դրիդոր Աճեան
13. Յ. Սուրբիաս Ստեփանեան
14. Յ. Կարապետ Սեմեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Արիկ Եփէնար Ռւնճեան
2. Անտոն Հաճեան
3. Գարրիէլ Ելաճեան
4. Մելքոն Հալաճեան
5. Միհրան Յովհաննէս
6. Միքայէլ Մոմճեան
7. Մկրտիչ Մանուկեան
8. Յովհաննէս Էսաւ
9. Յովհաննէս Կրճիկեան
10. Յովհաննէս Պօյաճեան
11. Ներսէս Ներսէս
12. Սահակ Ղաղարոսեան
13. Սարգիս Կիւլպէնկեան
14. Սինեքերիմ Մանուկեան

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՑԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Յայտարարութիւն ի Դիւանէ յաղագս վաւերացման Քաղ. Ժողովոյ.
2. — Վաւերացումն ներկայ շրջանի Դ.րդ և Ե.րդ նիստերու Ատենագը-
րութեանց.
3. — Շրջումն Օրակարդի.

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. — Մրագիր Ներքին Կանոնագրի Ազգ. Ժողովոյ. (Շարունակութիւն
վիճաբանութեան).
- Բ. — Առաջարկութիւն Ա. Պատրիարք Հօր յաղագս երկամեայ շրջանի
տեւողութեան կրօնական Ժողովոյ.
- Գ. — Ցեղեկագիր Քննիչ Յանձնաժողովոյ ի վերայ Ելմտացոյցի 1888-89 և
1889-90 ամաց.